

10 փետրվարի 2010 թ.

Մամուլի հաղորդագրություն

«Կենգուրու 2010»-ին դպրոցների մասնակցության գրանցումն սկսված է

«Այբ» կրթական հիմնադրամը հայտնում է, որ «Կենգուրու» միջազգային մաթեմատիկական մրցույթին մասնակցել ցանկացող դպրոցների գրանցումն սկսված է:

Այս տարի մրցույթը Հայաստանում կանցկացվի մարտի 18-ին, «Այբ» կրթական հիմնադրամի կողմից, ՀՀ կրթության և գիտության նախարարության հովանու ներքո:

Դպրոցում երեխաների գրանցման և դպրոցների հայտերի ներկայացման վերջնաժամկետն է փետրվարի 24-ը:

Հանրապետության ավելի քան 1200 դպրոցների արդեն ուղարկվել են մրցութային փաթեթները, որոնցում ամփոփված են դպրոցի մասնակցության հայտը, անցկացման մանրամասն կարգը, այլ անհրաժեշտ տեղեկություններ:

Մրցույթի կանոններն ու մասնակցության կարգը էական փոփոխությունների չեն ենթարկվել: «Կենգուրու 2010»-ի մանրամասներին կարող եք ծանոթանալ ինչպես «Կենգուրուի» կայքէջում՝ www.kangaroo.am, այնպես էլ մասնակցող դպրոցներում:

Ուրախ ենք նաև տեղեկացնելու, որ այս տարի «Կենգուրուի» խնդիրները (միայն ինտիմները) լինելու են երկլեզու բոլոր երեխաների համար՝ հայերեն և ռուսերեն: Մրցույթի օրը երեխան հնարավորություն կունենա ընտրել ինտիմները կարդալու և հասկանալու իրեն հարմար լեզուն: Այս հնարավորությունը ընձեռնվել է Հայաստանում «Ռոստոտրուդնիչեստվո» ներկայացուցչության շնորհիվ:

Հրավիրում ենք նաև դիտելու «Կենգուրուի» մասին պատմող հետաքրքիր տեսաֆիլմ՝ այցելելով <http://vimeo.com/8965679>:

«Կենգուրու» մրցույթի գլխավոր գործընկեր՝ «ՀՏԲ-Հայաստան բանկ»:

Ինֆորմացիոն հովանավորներ՝ «Մեդիամաքս» լրատվական գործակալություն և «Կրթություն» շաբաթաթերթ: